ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Լոռու մարզ
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար, հեռ.093344183

էլ. փոստ halavar.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 փետրվարի 2020 թվականի N 05-Ա

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետո
օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, ,Հայաստ
Հանրապետության բյուջետային համակարգի մասինե Հայաստանի Հանրապետության օրենք
րդ հոդվածի 8-րդ մասով,

Հալավար համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հալավար համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տար
հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի :
2. Հաստատել 2019 թվականի Հալավար համայնքի զարգացման ծրագրի իրականա
վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելված 2-ի:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ()	Դեմ(0)	Ձեռնպահ(
Աբազյան Գոհար Երվանդի			
Բաբայան Վահրամ Շահվալադի			
Մարտիրոսյան Նինա Լևոնի			
Հակոբջանյան Լաուրա Սարգիսի			
Մաթևոսյան Արթուր Արայիկի			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

գ. Հալավար
28.02.2020թ.

Հավելված 01
Հալավար համայնքի Ավագանու
Թիվ 05-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2019թ.-ում Հալավար համայնքի բյուջեի եկամուտները կազմել են 5557.8 հազար դրամ, որից վարչական բյուջեն՝ 5557.8 հազար դրամ, ֆոնդային բյուջեն 0 դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում եկամուտները կազմել են 5888.9հազար դրամ, որից վարչական բյուջեն՝ 5888.9հազար դրամ, ֆոնդային բյուջեն 0 դրամ:

Սեփական եկամուտները 2019թ.-ին կազմել են 1783.4 հազ. դրամ, պաշտոնական դրամաշնորհները՝ 3774.4 հազ. դրամ: Համայնքի վարչական տարածքում գտնվող հողի հարկից հավաքագրվել է 310.4հազ. դրամ, գույքահարկից՝ 278.0հազ. դրամ(գույքահարկ փոխադրամիջոցների համար-276.8հազ. դրամ, գույքահարկ համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար-1.1հազ. դրամ): Այլ եկամուտը կազմված է եղել համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարներից՝ 1169.5հազ. դրամ, տեղական վճարներից՝ 25հազ. դրամ:

2019թ.ում եկամուտների կատարման տոկոսը կազմել է 91.2%, այդ թվում սեփական եկամուտների մասով 76.9%, որից գույքի վարձակալությունից եկամուտները 76.0%, գույքահարկի հավաքագրումը 76.2% և հողի հարկի հավաքագրումը 78.2%:

ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2019թ.-ում Հալավար համայնքի վարչական բյուջեի ծախսերը կազմել են 5541.3հազ. դրամ մասով, որից՝

1. Աշխատանքի վարձատրություն-4932.1հազ. դրամ
2. Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում-589.2հազ. դրամ, որից՝
   ա/կապի ծառայություններ-65.5հազ. դրամ
   բ/տեղեկատվական ծառայություններ-16.0հազ. դրամ
   գ/մասնագիտական ծառայություններ-330.0հազ.դրամ
   դ/գրասենյակային նյութեր-45.0հազ. դրամ
   ե/ապահովագրական ծախսեր-34.0հազար դրամ
   զ/տրանսպորտային նյութեր-98.7հազար դրամ
3. Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ-20.0հազ. դրամ, որից
   ա/հուղարկավորության նպաստներ բյուջեից-20.0հազ. դրամ

2019թ.-ում Հալավար համայնքի բյուջեի ֆոնդային մասով ծախսեր չեն կատարվել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

Հավելված2

Հալավար համայնքի ավագանու

28.02.2020թ. N 05-Ա որոշման

ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

	ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ	ԿԱՏԱՐՈՒՄԸ
1.	Համայնքի վարչական տարածքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով սերտ համագործակցություն ՀՀ Լոռու մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ:	Ընթացիկ շարունակական
2.	Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, կառավարման թափանցիկություն, համագործակցություն:	Ընթացիկ շարունակական
3.	Համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատի, սերմացուի և գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով:	Ընթացիկ շարունակական, խոշոր ներդրումների բացակայություն
4.	Համայնքում իրականացնել աղբահանություն, համայնքը դարձնել բարեկեցիկ և մաքուր, բացառել վարակիչ հիվանդությունների տարածումը, ապահովել սանիտարահիգենիկ պայմանները:	Ընթացիկ շարունակական, խոշոր ներդրումների բացակայություն
5.	Խմելու և ոռոգման ցանցի կառուցում:	Ընթացիկ շարունակական, խոշոր ներդրումների բացակայություն
6.	Մելավատարների կառուցում:	Ընթացիկ շարունակական, խոշոր ներդրումների բացակայություն
7.	Բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում, համագործակցություն տարբեր կազմակերպությունների հետ և տուրիզմի զարգացման ծրագրերի իրագործում	Ընթացիկ շարունակական, խոշոր ներդրումների բացակայություն

8.	Հին տնակային հանրակացարանի շենքի վերանորոգում:	Ներդրումների բացակայություն, սուղ համայնքային բյուջե
9.	Գիշերային լուսավորվածության համակարգի անցկացում հիմնական փողոցներով:	Ներդրումների բացակայություն, սուղ համայնքային բյուջե
10.	Անտառների պահպանում, անտառտնկման աշխատանքներ , շրջակա միջավայրի պաշտպանության և մաքրման աշխատանքներ, կենդանական աշխարհի պահպանություն:	Ընթացիկ շարունակական, խոշոր ներդրումների բացակայություն, բնակիչների ուժերով
11.	ՀԷԿ-ի կառուցում, աշխատատեղերի ստեղծում:	Ներդրումների բացակայություն, սուղ համայնքային բյուջե
12.	Ամբուլատորիայի շենքի կառուցում և շահագործում, առաջնային առողջապահական ծառայությունների մատուցում, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման մակարդակի բարելավում՝ պետական պատվերի շրջանակներում:	Ներդրումների բացակայություն, սուղ համայնքային բյուջե
13.	Միջհամայնքային ճանապարհի ընթացիկ վերանորոգում, բարեկարգում և ասֆալտա-պատում՝ նպաստելով համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքները մինչև շուկա հասցնելուն և իրացնելուն, մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և ապահովում, զբոսաշրջության զարգացում:	Ընթացիկ շարունակական Համայնքային բյուջեի տարեկան նախատեսումներով
14.	Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:	Ընթացիկ շարունակական, ներդրումների բացակայություն, բնակիչների ուժերով

Համայնքային առաջնային ծրագրերը չեն իրագործվել ներդրումների բացակայության և համայնքային տարեկան բյուջեի աղության պատճառով: Ներդրող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ կապը և համագործակցությունը շարունակական է:

Հիմնահարց	Պատճառ	Հետևանք	Այլընտրանքային լուծումներ	Պատկան մարմին/ դոնոր կազմակերպություն
ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ	• Ֆինանսների բացակայություն	• Բնակչությունը կապահովվի բնակարաններով, կբարձրանա սոցիալ-տնտեսական մակարդակը, համայնքը կվերակառուցվի, կդառնա գեղեցիկ և բարեկեցիկ:	• Անհրաժեշտ է պետական աջակցություն • Բնակչության աջակցություն	• ՀՀ Կառավարություն Համայնքապետարան • Դոնոր կազմակերպություններ • Բարերարներ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ	• ֆինանսներ ի բացակայություն	• Պտղատու այգիների կմշակվեն, կբարձրանա այգիների բերքատվությունը, կստեղծվեն աշխատատեղեր, մրգի վերամշակման արտադրության շահագործում, մրգի իրացում, համայնքի և բնակչության եկամուտների շահութաբերության բարձրացում:	• Անհրաժեշտ է պետական աջակցություն • Բնակչության աջակցություն	• ՀՀ կառավարություն • Համայնքապետարան • Դոնոր կազմակերպություններ
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ	Ֆինանսների բացակայություն	• Համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների շահագործում և պահպանում, անվտանգ երթևեկություն, սպառման շուկայի, մայրուղու, բժշ հաստ. հասանելիություն, սոցիալ-տնտ վիճակի բարելավում:	• Անհրաժեշտ է պետական աջակցություն • Բնակչության աջակցություն	• ՀՀ կառավարություն • Համայնքապետարան • Դոնոր կազմակերպություններ

գ. Հալավար
28.02.2020թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ